

ՄԱՐԳԱՐԻՏԱ ՎԱՐԴԱՆՅԱՆ

Հայաստանի Հանրապետության պետական կառավարման
ակադեմիայի իրավագիտության ամբիոնի հայցորդ

ԱՐԺԱՆԱՊԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՎ ՊԱՏՎԻ ՀԱՐԱԲԵՐԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՈՒ ԲԱՐՈՅԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ

Սույն հոդվածում բացահայտված են պատվի և արժանապատվության կարևորագույն առանձնահատկությունները, ընդհանրությունները, պատմական զարգացման հարաբերական ինքնուրույնությունը, համապարփակ բնույթը:

Այսպիսով, պատիվը՝ որպես անձի բարոյական, քաղաքական, աշխատանքային, գործնական և այլ հատկանիշներին հանրության կողմից տրվող օբյեկտիվ սոցիալական գնահատական, միաժամանակ դիտարկվում է որպես հասարակության անդամի սոցիալական և հոգևոր հատկությունները բնութագրող հիմնական չափանիշ, որը մեծ մասամբ կախված է հենց իրենից, իր դրսևորած վարքագծից, այլ մարդկանց, հասարակության և պետության հանդեպ ցուցաբերած վերաբերմունքից:

Իսկ արժանապատվությունն անձի կողմից իրեն տրվող սոցիալական գնահատականի գիտակցումն է, այսինքն՝ սեփական հատկությունների, կարողությունների, ունակությունների, աշխարհայացքի, հասարակական արժեքավորության ինքնագիտակցումը և ներքին ինքնագնահատականը:

Հիմնարար բառեր- բարոյականություն և իրավունք, պատիվ և արժանապատվություն, բարոյական արժեքներ, ինքնագիտակցում, ինքնագնահատական, սուբյեկտիվ սոցիալական գնահատական, անօտարելիություն, անփոխանցելիություն, բարոյական նորմեր, կամարտահայտություն, հասարակական կարծիքի ուժ:

Բարոյականության և իրավունքի ազդեցության ոլորտները նույնատիպ են: Դրանք կոչված են կարգավորելու, մասնավորապես՝ ինչպես միջանձնային անհատական հարաբերությունները, այնպես էլ հասարակական հարաբերություններն ընդհանրապես: Այդ իմաստով բարոյականության և իրավունքի միջև գոյություն ունեն ընդհանրական բնութագրիչներ, ինչը պայմանավորված է այն հիմնավորմամբ, որ, ի վերջո, իրավունքը պետք է լինի բարոյական: Սակայն, այդպիսի հարաբերակցությունը չի բացառում նաև բարոյականության և իրավունքի միջև առանձնահատուկ բնութագրիչների առկայություն:

Իրավունքի և բարոյականության ընդհանրությունները զգալի են. դրանք ամենից առաջ առնչվում են գործունեության ոլորտի միասնականության, հետևաբար նաև սոցիալական միասնական արժեքի ապահովման, կառուցվածքային միևնույն բնութագրիչների սահմանման հետ, իսկ մյուս կողմից՝ այդպիսի ընդհանրությունները փոխկապակցված են մարդկանց գիտակցության ու կամքի, հասարակության սոցիալական կազմակերպության, քաղաքակրթության մակարդակի և այլ գործոնների հետ: Հենց այդ չափանիշներով էլ պայմանավորված՝ տարբերվում են իրավունքն ու բարոյակա-

նությունը¹:

«Բարոյականություն» և «իրավունք» եզրույթներն առանձին վերցրած, անշուշտ, ունեցել են իրենց պատմական զարգացման էվոլյուցիան՝ ապահովելով միաժամանակ հարաբերական ինքնուրույնություն: Այսպես, եթե իրավունքը հանդես է եկել որպես տնտեսապես իշխող դասակարգի շահերի պաշտպան, ապա բարոյականությունը ունենալով ավելի վաղ ծագում, դեռևս նախնադարյան համայնական հասարակարգի ժամանակաշրջանում սպասարկել է ողջ հանրությանը: Եվ միայն դասակարգային սուր հակասությունների ու պայքարի պայմաններում բարոյականությունը ևս դասակարգային շերտավորման երանգներ ստացավ՝ չկորցնելով իր ընդհանուր սոցիալական բնույթն ու ուղղվածությունը:

Միաժամանակ անհրաժեշտ է նկատել, որ բարոյական նորմերը խարսխվում են բարու և չարի, պատվի և արժանապատվության, պարտքի ու պատասխանատվության վերաբերյալ առկա առաջավոր պատկերացումների վրա: Դրանք դարերի ընթացքում և աշխարհի ճանաչողության ու աշխարհընկալման գործընթացներում մշակվել ու գիտական ճանաչում են ստացել մեծ մտածողների՝ փիլի-

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

սովայության, կրոնի, գրականության, արվեստի ոլորտների գործիչների կողմից:

Բարոյական նորմերը կարող են ընկալվել որպես սկզբունքներ, հասկացություններ, գաղափարներ, գնահատականներ, առաքինություններ: Բարոյական նորմերով կարգավորվող ոլորտն առաջին հայացքից գտնվում է «մաքուր» վիճակում, և դրա սահմանները համեմատաբար «նեղ» են (օրինակ՝ ընկերական, փոխօգնության, ընտանեկան և այլ հարաբերություններ), բայց դա թվում է միայն առաջին հայացքից: Այդ նորմերն իրավունքի նորմերի նման (և նույնիսկ ավելին) համապարփակ են ու թափանցում են հասարակական կյանքի գրեթե բոլոր, այդ թվում՝ տնտեսական, քաղաքական, սոցիալական, աշխատանքային և այլ ոլորտներ:

Ըստ պատմական զարգացման օրինաչափությունների՝ բարոյականության և իրավունքի դինամիկան ընթանում է մարդկային փոխհարաբերությունների մեջ բարոյականության նշանակության բարձրացման ուղիներով: Բարոյականության ազդեցությունը տարածվում է մարդկային փոխհարաբերությունների շատ ասպարեզների վրա:

Իր էությամբ բարոյականությունը փաստորեն կարող է ազդեցության ավելի լայն ոլորտ ձեռք բերել, քան իրավունքը: Մեր կյանքում կան շատ երևույթներ, որոնք լիովին կարգավորվում են բարոյականության նորմերով, սակայն առանձին փոխհարաբերություններում իրավունքը պահպանում է իր ազդեցիկ ու գերակա դերն ու նշանակությունը:

Այդ իմաստով կարծում ենք, որ հիմնավոր է այն տեսակետը, ըստ որի՝ բարոյականությունն ի վիճակի է թափանցելու մարդկային ամենամուրբ ու բազմապիսի փոխհարաբերությունների մեջ ու կարգավորելու դրանք, մինչդեռ իրավունքի ուժը տարածվում է որոշակի շրջանակներում²:

Մյուս կողմից, եթե իրավունքն օժտված է հասարակական հարաբերությունների կարգավորման հատուկ մեխանիզմով, մարդկանց իրավունքներն ու պարտականությունները հատուկ սահմանված են որպես հնարավոր և պատշաճ գործողություններ, ընդամենը իրավական փաստերի միջոցով վերացական օբյեկտիվ իրավունքը վերածվում է կոնկրետ սուբյեկտիվ իրավունքի, ապա բարոյական նորմերը ներգործում են անձի ներքին կարգավորիչների (կամքի, բանականության, խղճի, արժեքների, շարժառիթների դրույթների) միջոցով: Այսինքն՝ բարոյականությունը գործ ունի մարդու ներ-

քին համոզմունքի հետ, որով էլ պայմանավորված է նրա ուժը: Թերևս բարոյականությունն ունի իրավական իմաստ ու բովանդակություն՝ չունենալով իրավունքին հատուկ բոլոր բնութագրիչները:

Իրավական նորմը պատշաճ վարքագծի կանոնն է՝ միանգամայն կոնկրետ ու հատակ ուրվագծված ազատության չափի ու մասշտաբի համադրությամբ, սակայն առանց պետության միջամտության ու պետական հարկադրանքի կիրառման հնարավորության՝ այն չի կարող գործել ու իրացվել:

Բարոյական նորմերն առանց պետական հարկադրանքի ու մեխանիզմների իրացման, այնուամենայնիվ, գործում են ոչ պակաս արդյունավետությամբ, իսկ բազում դեպքերում դրանք ունեն բացառիկ կարևորություն: Այսպես, բարոյականությունը դրսևորվում է ոչ թե որպես սկզբունքների կամ տրամաբանության միասնության ապահովման միջոց, այլև դիտարկվում է որպես հասարակական կյանքից բխող սովորույթ, բարքեր, կանոն և, ի վերջո, որպես կենսական անհրաժեշտության և մարդկության գոյի հիմք:

Իսկ իրավունքն էլ պետք է ծնվի օբյեկտիվորեն հասարակության մեջ ոսկրացած այդ բարոյական նորմերից և արտահայտի մարդկանց կենսական պահանջմունքները: Ահա իրավունքի և բարոյականության հարաբերակցման սահմանագծերը. իրավունքն ու բարոյականությունը՝ որպես սոցիալական նորմեր, ոչ միայն հաստատագրում են գոյություն ունեցող իրականությունը, գոյը, այլև պատշաճը (զախքը), հասարակության համար անհրաժեշտը, ընդ որում, պատշաճի բարոյական գնահատականն ավելի ընդգրկում է, քան իրավականը: Իսկ դա բերում է այն պնդմանը, որ անգամ պետության և իրավունքի առաջացումից հետո էլ բարոյականությունը պահպանում է իր առաջնայնությունը:

Իրավունքը բովանդակում է հասարակության մեջ գոյություն ունեցող բարոյական արժեքներ, եթե խոսքը բարոյականության, հետևաբար և կամայականությունից զուրկ իրավունքի մասին է: Արդարացի է այն պնդումը, որ այն, ինչ բարոյական չէ, չի կարող իրավական լինել կամ ծնել իրավունք: Այս տեսանկյունից էլ պատիվը և արժանապատվությունը՝ որպես բարոյական անքակտելի արժեքներ և մարդկային հատկանիշներ, պետք է գտնվեն իրավունքի արժեքի հիմքում և պաշտպանվեն հենց իրավունքի կողմից:

www.journal.lawinstitute.am

Առանձին հետազոտողների կողմից արդարացիորեն նշվում են, որ քաղաքականության, պետության և իրավունքի ոլորտներում գործնականորեն չկան հարաբերություններ, որոնք բարոյականության (չարի և բարու) գնահատման դիրքերից դուրս լինեն: «Բոլոր իրավական երևույթները ենթակա են բարոյական գնահատականի՝ ամենից առաջ բարու և չարի հայեցակարգերի դիրքերից: Այդպիսի գնահատող հարաբերությունը ևս իրավական ու բարոյական համակարգերի կապի ձևերից մեկն է»:

Իրավունքն ու բարոյականությունը՝ որպես սոցիալական կարգավորիչներ և մարդու կարևորագույն արժեքային կողմնորոշիչներ, չէին կարող գոյություն ունենալ, եթե անգամ ուղղված չլինեին մարդու բանականությանն ու կամքին: Այդ արժեքների շնորհիվ է մարդը հնարավորություն ունենում համակերպվելու հասարակական բարդ ու մշտապես փոփոխվող հարաբերություններին: Իրավունքն իր բնույթով ուրվագծում է մարդու արտաքին գործողությունների ազատությունը և պահպանում չեզոքություն իր ներքին ազատության նկատմամբ, մինչդեռ բարոյականությունը ոչ միայն մատնանշում է նրա արտաքին ազատության սահմանները, այլև պահանջում սահմանել անձի ներքին ինքնորոշման և ներքին ազատության սահմանները:

Հիշատակվածից հետևում է, որ և՛ իրավունքը, և՛ բարոյականությունը ծառայում են մարդու դաստիարակման գործին, այսինքն՝ դրանց բարոյական-իրավական իմաստը դաստիարակչական գործառույթի սահմանումն է: Ընդ որում, բարոյական ցանկացած գործողություն պետք է լինի ոչ թե արտաքին ազդակների (վախ, շահ, բռնություն) արդյունք, այլ նպատակների ճշմարտացիության ներքին համոզմունք:

Ի վերջո, բարձր բարոյականության տեր մարդը ոչ թե պետք է իր արարքները հարմարեցնի ժամանակավորապես ստեղծված պայմաններին, կեղծի ինքն իրեն, այլ ցանկացած իրադրությունում գործի իր ներքին համոզմունքներին համաձայն: Դրանով է միայն մարդը ձեռք բերում բարոյական կերպար, դառնում անհատականություն: Այդպիսի մարդը, որը նաև ուժեղ է, կարիք չունի անգամ գրված օրենքի աջակցության: Նա միայն որպես «քաղաքացի» իր վարքը կարգավորելիս է անդրադառնում իր պետության օրենքների պահանջներին, իսկ որպես մարդ - անհատականություն - անձ՝ նա

հասարակության մեջ պետք է առաջնորդվի, այսպես կոչված, «չգրված» օրենքներով, համակեցության համապարտադիր կանոններով, այդ բարոյական սկզբունքներով ստեղծի իր կյանքի օրենքը՝ որպես իր և հասարակության յուրաքանչյուր անդամի կենցաղի ճիշտ ապրելակերպի հիմք: Այս պարագայում արդարացի է հին փիլիսոփայության այն մտքի մեջբերումը, ըստ որի՝ օրենքը սնվում է բարոյականությամբ և ծնում բարոյականություն:

Կարևոր է մատնանշել, որ բարոյականությունը ոչ միայն «ապահովում» է իր կարգավորման ոլորտը, այլև միաժամանակ սահմանում այն արարքները, որոնք գտնվում են իրավունքի հսկողության շրջանակներում: Այդ իմաստով բարոյականությունը կարելի է դիտարկել որպես իրավական հենարան, քանի որ, եթե իրավունքն արդարացված է բարոյականությամբ, ապա բարոյականությունը պաշտպանվում է հենց իրավունքով:

Այսպիսով, մարդկային բոլոր արարքները, սկսած իրենց մտահոգման աստիճանից մինչև բուն արարքի ավարտը, գտնվում են բարոյականության ոլորտում, մինչդեռ իրավունքն այդ արարքների նկատմամբ իր ուժը դրսևորում է միայն ճանապարհին կամ արարքի ավարտից հետո: Եվ այդ իմաստով նաև բարոյականությունն ու իրավունքը ունեն նույն նպատակը՝ արգելել չարին, թույլ տալ բարուն, սակայն այն տարբերությամբ, որ իրավունքը դա անում է հրամայականի ոգով, իսկ բարոյականությունը ձգտում է նույն նպատակին հասնել ավելի մեղմ միջոցներով:

Այս իմաստով բարոյական ներգործության ուժն ու միջոցն են հասարակական կարծիքը, ավանդույթներն ու սովորույթները: Սակայն հասարակական կարծիքը, ըստ Հեգելի բնութագրման, արժանի է ինչպես հարգանքի, այնպես էլ անարգանքի: Եվ այդ իմաստով հասարակական կարծիքն ու առողջ բանականությունը կան ու կմնան որպես բարոյական նորմերի իրացման հզոր լծակներ:

Դարեր շարունակ փիլիսոփաներին թվում էր, թե պատվի ու արժանապատվության զգացմունքները մարդկության ներքին աշխարհին հատուկ որակների արդյունք են և բնորոշ են անհատին: Ըստ «ինքնաիրացման» տեսության (Ֆ.Բրեդլի, Ռոյսի, Կրոչե) բարոյական բոլոր որակները պայմանավորված են մարդկանց անհատականությամբ՝ «ինդիվիդուալ «ես»-ով»: Միայն այդ «ես»-

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

ով է բացատրվում պատվի ըմբռնման աստիճանը:

Հիշատակված տեսություններում լիովին անդրադարձ չի կատարվում այլ «ես»-ի կամ հասարակական գոյության նշանակությանը: Այսպես, եթե մարդն իր գործունեության համար պետք է պատասխանատու լինի ոչ միայն հասարակության առաջ, որը գլխավորն է, այլ ինքն իր առաջ, ապա անհրաժեշտ է հաշվի առնել այն իրողությունը, որ մարդիկ պետք է պատվի զգացումով վերաբերվեն յուրաքանչյուր անձի նկատմամբ, այսինքն՝ եթե դու գնահատում ես դիմացիինդ արժեքը, ապա դրանով իսկ հաստատում ես քո արժեքը: Հենց այս համատեքստում էլ կարելի է պնդել, որ պատվի և արժանապատվության սոցիալական ըմբռնումը ունի նաև օրենքի իմաստ:

Այստեղ արդեն երևան է գալիս հարցի իրավական կողմը, այն է՝ իրավունքը իրեն հայտնի միջոցներով պաշտպանության տակ է վերցնում քաղաքացու պատիվը և արժանապատվությունը:

Այնուամենայնիվ, պատիվը՝ որպես անձի բարոյական, քաղաքական, աշխատանքային, գործնական և այլ հատկանիշներին հանրության կողմից տրվող օբյեկտիվ սոցիալական գնահատական, միաժամանակ դիտարկվում է որպես հասարակության անդամի սոցիալական և հոգևոր հատկությունները բնութագրող հիմնական չափանիշ, որը մեծ մասամբ կախված է հենց իրենից, իր դրսևորած վարքագծից, այլ մարդկանց, հասարակության և պետության հանդեպ ցուցաբերած վերաբերմունքից:

Իսկ արժանապատվությունն անձի կողմից իրեն տրվող սոցիալական գնահատականի գիտակցումն է, այսինքն՝ սեփական հատկությունների, կարողությունների, ունակությունների, աշխարհայացքի, հասարակական արժեքավորության ինքնագիտակցումը և ներքին ինքնագնահատականը:

Բարոյական կատեգորիաների շարքին դասվող հիշատակված արժանիքներն ապահովում են սուբյեկտի սոցիալական գնահատականը և նրա դերը հասարակության մեջ: Այդ գնահատականը կախված չէ գնահատվող անձի ցանկությունից և կամքից, քանի որ անձի ողջ կենսագրությունն անցնում է հանրության հսկողության ներքո, և հանրությունն էլ ձևավորում է յուրաքանչյուր կոնկրետ անձի բարոյական գնահատականը³: Սեփական արժանապատվության գիտակցումը պետք է հենվի

անձի կողմից իր առավելությունների և թերությունների լիակատար ըմբռնման վրա⁴:

Բացի դրանից, արժանապատվությունը մարդկային հատկանիշ է, որը հավասարագոր է հարգվելու իրավունքին և ուրիշներին հարգելու պարտականությանը: Այն ձեռք է բերվում անձի զարգացման որոշակի շրջանում, երբ վերջինս գիտակցում է իր ազատությունը և հավասարությունը մյուսների նկատմամբ, իր պաշտպանվածությունը, երբ մարդը սկսում է արժևորել իրեն, գնահատել իր տեղը հասարակության մեջ: Արժանապատվության տակ նաև կարելի է հասկանալ մարդու և նրան շրջապատողների կողմից նրա որոշակի բարոյական և մտավոր կարողությունների ընդունումն ու ճանաչումը: Միաժամանակ, մարդու արժանապատվությունը որոշվում է ոչ միայն սուբյեկտի ինքնագնահատականով, այլ մարդու օբյեկտիվ հատկությունների համակցությամբ, որոնցով բնութագրվում է նրա վարկանիշը հասարակության մեջ (բանականություն, բարոյական տվյալներ, գիտելիքների մակարդակ, սոցիալապես օգտակար հատկություններ, արժանավայել կենսաձև և այլն): Իր բնույթով լինելով հասարակական էակ՝ մարդու արժանապատվության զգացումը առաջ է գալիս հասարակական հարաբերությունների ոլորտում:

Իսկ մարդու արժանապատվության համար ամենակարևոր նախադրյալը նրա հնարավորությունների (մարդու իրավունքների) ազատ և անարգել իրագործումն է: Բնականաբար մարդու իրավունքների և ազատությունների ցանկացած ոտնահարում հանգեցնում է մարդու արժանապատվության նսեմացման: Այդ է պատճառը, որ արժանապատվության իրավունքը հանդիսանում է մարդու իրավունքի և ազատությունների հիմնական աղբյուրը, և որի պաշտպանությունը համարվում է պետության գոյության հիմնական պայմանը:

Պատվի և արժանապատվության կարևորագույն առանձնահատկություններից է նաև դրանց անօտարելիությունն ու անփոխանցելիությունը, ինչպես նաև սուբյեկտին անհատականացնելը: Այս հատկանիշներից բխում է, որ այդ բարիքները որևէ գործարքի առարկա հանդիսանալ չեն կարող. դրանք վաճառել, նվիրել, գրավ դնել, փոխանակել կամ այլ եղանակով օտարել հնարավոր չէ: Անձնական այդ բարիքներն այդպիսիք կրողների համար գոյություն ունեն և ինքնուրույն արժեք են ներկայացնում՝ անկախ դրանց իրավական կարգավոր-

www.journal.lawinstitute.am

ման աստիճանից և բնույթից, անկախ դրանց կապակցությամբ առաջացող սուբյեկտիվ իրավունքներից: Այդպիսիք քաղաքացիական իրավունքի սուբյեկտները ձեռք են բերում և իրականացնում են իրենց կամքով:

Վերջապես արժանապատվության՝ որպես իրավական արժեքի պաշտպանությունը՝ համարվում է իրավական պետության գոյության հիմնական պայմանը: Հայաստանի Հանրապետությունում ճանաչված է մարդու արժանապատվության սկզբունքը, որն իր արտահայտությունն է գտել ՀՀ Սահմանադրության 3-րդ հոդվածում, համաձայն որի՝ մարդը, նրա արժանապատվությունը, հիմնական իրավունքները և ազատությունները բարձրագույն արժեքներ են: Միաժամանակ, արժանապատվության պաշտպանության և հարգման սկզբունքը իր ամրագրումն է ստացել Սահմանադրության 14-րդ հոդվածում, համաձայն որի՝ մարդու արժանապատվությունը՝ որպես նրա իրավունքների ու ազատությունների անքակտելի հիմք, հարգվում և պաշտպանվում է պետության կողմից, 17-րդ հոդվածում, համաձայն որի՝ ոչ ոք չպետք է ենթարկվի խոշտանգումների, ինչպես նաև անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի: Ձերբակալված, կալանավորված և ազատազրկված անձինք ունեն մարդասիրական վերաբերմունքի և արժանապատվության հարգման իրավունք, միևնույն ժամանակ այն կարմիր թելով անցնում է Սահմանադրության ողջ ոգու միջով:

Այսպիսով, արժանապատվության ու պատվի՝ որպես իրավական ու բարոյական արժեքների վերաբերյալ բերված դատողությունների ու դրանց իրավական կարգավորումների համադրված վերլուծությունների համատեքստում անհրաժեշտ է վեր հանել հետևյալը.

1. եթե իրավական նորմերը սահմանվում են պետության կողմից, ապա բարոյական նորմերը ծագում են տարերայնորեն,

2. եթե իրավական նորմերն իրենց ամրագրումն են ստանում գրավոր աղբյուրներում, ապա բարոյական նորմերը գոյություն ունեն մարդկանց գիտակցության մեջ,

3. եթե իրավական նորմերի իրացումն ապահովված է պետական հարկադրանքի հնարավորությամբ, ապա բարոյական նորմերը կյանքի են կոչվում մարդկանց կամարտահայտության ու հասարակական կարծիքի ուժով,

4. եթե իրավական կարգավորման ոլորտն այն հարաբերություններն են, որոնք գտնվում են պետական վերահսկողության ներքո, ապա բարոյական կարգավորման ոլորտները պետությանը ենթակա չեն:

Այնուամենայնիվ, իրավունքի ու բարոյականության սերտ կապերն ու փոխգործողությունները մեծապես նպաստում են սոցիալական այդ երկու կարգավորիչների՝ արժանապատվության ու պատվի դերի կարևորմանը, դրանց գործունեության արդյունավետության բարձրացմանը, հասարակական հարաբերությունների կայունացմանն ու ամրապնդմանը:

¹ Տե՛ս Խաչատրյան Ա. Իրավունք, քաղաքականություն, բարոյականություն, Երևան 2003թ.

² Տե՛ս Քալաշյան Լ.Խ. Բարոյականությունը և իրավունքը մարդկային փոխհարաբերություններում, Երևան 1968թ.

³ Տե՛ս Анисимов А.Л. Честь, достоинство, деловая репутация, гражданско-правовая защита. М. 1994, С.13.

⁴ Տե՛ս Ավագյան Վ. Մարդու իրավունքներ, Տիգրան Մեծ, Երևան 2007թ. էջ 91:

Մարգարիտա Վարդանյան

Աспирант кафедры юриспруденции академии
государственного управления Республики Армения

РЕЗЮМЕ

Соотношение достоинства и чести в контексте права и нравственности

В данной статье выявлены важнейшие особенности, общие черты чести и достоинства, их относительная самостоятельность исторического развития, всеобъемлющая характеристика.

Таким образом, честь как объективная социальная оценка нравственных, политических, трудовых, практических, и иных качеств личности, одновременно рассматривается как основной критерий, характеризующий социальные и духовные качества члена общества, которая в основном зависит от самого человека, его поведения, от отношения других людей к обществу и государству.

А достоинство – это осознание социальной оценки, данной самому себе человеком, то есть самосознание и внутренняя самооценка собственных качеств, способностей, возможностей, мировоззрения, общественной ценности.

Ключевые слова: *нравственность и право, честь и достоинство, нравственные ценности, самосознание, самооценка, социальная оценка субъекта, неотчуждаемость, непередаваемость, нравственные нормы, волеизъявление, силой общественного мнения.*

Margarita Vardanyan

Graduate student of chair of Jurisprudence of the Public Administration Academy of RA.

SUMMARY

The correlation between the honour and dignity in the context of Law and Ethics

This article covers the crucial characteristics of honor and dignity, their similarities, relatively independent historical development and universal nature.

Honour as a social appraisal, which is objectively given from the society to the ethical, political, practical, labor and other characteristics of a person, is considered to be the main criterion for describing the social and spiritual characteristics of a person, which mostly depend on the person himself/herself, on his/her behavior, his/her attitude towards the society, towards the state and other people.

Dignity is the person's ability to realize the social appraisal given to him/her, i.e. the self-consciousness of the person's characteristics, abilities, world-view, social value, his/ her inner self-esteem.

Keywords: *Ethics and Law, honor and dignity, ethical values, self-esteem, self-consciousness, the social appraisal of the subject, inalienability, non-transferability, ethical standards, will expression, by virtue of the social opinion.*